

Ա. ԶԱՔԱՐՅԱՆ, XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը, ՀՍՍՀ ԳԱ
Հրատարակչություն, Երևան, 1973, 328 էջ

Ուշի-ուշով ժանր ու թեթև անելով սովետահայ բանասերների վերջին օսան տարիների գրականագիտական աշխատությունների սովոր ցանկը, հրատարակված մենագրություններն ու փոքրածավալ հետազոտությունները, շենք կարող աչք փակել մի իրողության հանդեպ. չհաշված եզակի բացառությունները, մասամբ և բանաբաղությունները, կարծես բոլորն էլ խոսքերը մեկ արած՝ իրենց ջանքն ու ճիգը գործադրում են առանձնապես մեկ հեղինակի կյանքի ու ստեղծագործության հատկանշական կողմերի վերհանման վրա, ծավալվելով միայն տվյալ շրջափուլի սահմաններում, տվյալ ստեղծագործողի գրական վաստակի, առնչակցությունների ու բանեցրած այս կամ այն գրական տեսակի քննության մարզում: Ընդհանրացնող աշխատություններ, որոնք ներկայացնեն ազգային բանաստեղծության յուրահատկություններն ու այս վերջինների փոխանցման կամ փոխակերպության բարդ ու հակասական ընթացքը դարերի միջով, գրեթե չեն երևում: Նմանօրինակ աշխատության երևան գալը, ինչ խոսք, ամենից առաջ պայմանավորված էր ո՛չ այնքան նախանձախնդիր հետազոտողների և խոր գիտելիքներով ու լայն էրուդիցիայով գրականագետների առկայությամբ, որպիսիք, առանց այլևայլության, մենք ունենք, որբան տվյալ գրականության գլխավոր դեմքերի ստեղծագործության կամ գրական ավյալ սևուի ուսումնասիրության վիճակով:

Գաղտնիք չէ՝ բնավ, որ առանց առանձին վերցրած գրողների ժառանգության, գրական ուղղությունների, սեռերի ու տեսակների վերաբերյալ վավերական ու վերլուծական աշխատությունների անկարելի պիտի լինի հայ (ինչպես և ամեն մի ուրիշ) գրականության, մասնավորապես նրա նոր շրջանի բանաստեղծության հիմնական օրինաչափությունների, ազգային յուրօրինակությունների և ստեղծագործական հնարանների հայտարարն հանդիսացող էական ցուցանիշների վերանորոգման ընթացքի բացահայտումը:

Անցած տասնամյակների մեր գրականագիտական հետազոտությունները լավագույնս նախապատրաստել են այդօրինակ աշխատության երևան գալը, տեսական ու փաստագիտական ամուր հիմք ստեղծել մեր գրականագիտական մտքի թևակոխման համար նոր շրջափուլ:

Դրա արտահայտություններից է Ա. Զաքարյանի աշխատությունը, որ թարմություն է բերում ոչ միայն իր հղացմամբ ու կատարումով, այլև առաջադրած ծանրակշիռ հարցերի ինքնատիպ լուծմամբ՝ կապված այսօրվա հայ բանաստեղծության ցավոտ հարցերի հետ: Այս իմաստով՝ Զաքարյանի աշխատությունը նաև խորապես արդիական է՝ թելադրված այսօրվա պահանջներով: Իբրև կարևոր հատկանիշ ներկա աշխատության, նախ և առաջ կուզենք նշել կատարողի լավատեղյակությունը իր հետազոտության առարկային՝ վերջինիս մանրամասներն ու երկրորդական, թաքնված առնչակցությունները նկատի ունենալով: Գրքի յուրաքանչյուր էջ կրկին ու կրկին համոզում է մեզ, որ Զաքարյանը երևակայության ոլորտներում հայեցողություններով պարապող գրասեր չէ, այլ փորձությունների բովով անցած՝ հիմնավոր ու բազմակողմանի գիտելիքների տեր հմուտ մի գրականագետ:

Զաքարյանի աշխատության էական առանձնահատկություններից մեկն էլ հայ բանաստեղծության բազում դարերի միջով ձգվող խճճված շղթայի գլխավոր հանգուցակետերը՝ ճշտորեն զատորոշելու և օղակ առ օղակ քանդելու կարողությունն է: Որքան էլ առաջին հայացքից թեման և երկմտանքի տեղիք տվող, այնուամենայնիվ ճշմարիտ և ընդունելի են հեղինակի դատողությունները նոր բանաստեղծության ակունքների և անցած ճանապարհի վերաբերյալ: Հիրավի, վիպական մտածողությունը տիրապետող է եղել հայ բանաստեղծության զարգացման բոլոր շրջափուլերում: Հին վիպական երգերից ու ողբասացություններից սկիզբ առնելով՝ հայոց բանաստեղծությունը բյուրեղանում է այնպիսի գրական կոթողների մեջ, ինչ-

պիսիք են նարեկացու Ողբերգության մատյանը և Արուսյանի «Վերք Հայաստանի» վեպը, ու նրանց միջոցով հասնում մինչև Թումանյան, Իսահակյան, Սիամանթո ու Զարենց, Մասնավորապես այս հանճարեղ ստեղծագործողների բանաստեղծական մտածողությունը և կյանքի վերարտադրման սկզբունքները անվիճելիորեն որոշիչ դեր են խաղացել հայ նոր քնարերգության գեղագիտական ու ոճական սկզբունքների ձևավորման գործում, ձեռք բերելով նաև բանաստեղծական բարձրագույն թռիչքի, գեղարվեստական կատարելության և հոգեբանական խորության հասնելու տիպար-օրինակի նշանակությունը:

Ա. Զաքարյանի աշխատության անկոծկելի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա ո՛չ թե լոկ խոսքով (այդ հին հիմնադրություն է որոշ գրականագետների շրջանում), այլ ծանրակշիռ փաստերով ու խոսուն օրինակներով հավաստում ու հաստատում է հայոց նոր բանաստեղծության լիարյունությունն ու հավասարազորությունը՝ համաշխարհային գրականության առաջնակարգ հուշարձանների համեմատությամբ, ամենատարբեր առիթներով ցույց տալով, որ հայ մեծ քնարերգականների հարազատ ու ընտանի են եղել նույնպիսի հույզեր ու պատկերացումներ, առօրյայի ու արտաքին աշխարհի բազմազան առնչակցությունների վերարտադրման նույնպիսի սկզբունքներ, անհատի ու հանրության մտածողության ու հոգեբանության վերլուծման նույնպիսի եղանակներ, որոնց դիմել կամ որոնք գործադրել են իրենց ստեղծագործական առօրյայում Դանթեն ու Պետրարքան, Գյոթեն ու Բայրոնը, Պուշկինն ու Տոլստոյը, Դոստոևսկին ու Բլոկը և ուրիշներ: Այս առումով՝ աշխատությունն ունի հարուստ խորք, և հայ գրականության երևույթները նժարվում ու գնահատվում են համաշխարհային գրականության չափանիշներով, գիտվում մասնավորապես ոուս գրականության հետ ունեցած սերտ աղբյուրակցությունների մեջ:

Աշխատության էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հեղինակը փոխանակ հատուկ գլուխներ ու ենթագլուխներ նվիրելու այս կամ այն բանաստեղծի գրական ուղղության, աշխարհայացքի և ապրած շրջափուլի սոցիալ-քաղաքական իրադարձությունների վերլուծմանը, այդ ու նման իրողությունների մասին գաղափար է տալիս գրողների ստեղծագործության գեղարվեստական վերլուծման և գործադրած ոճական հնարքների բացահայտման միջոցով, նրանց ստեղծած կերպարների ապրած միջավայրի ու շրջապատի հետ ունեցած բազմազան կապերի վերհանմանը զուգընթաց, որն, ինչ խոսք, չափազանց դժվար իրականացվող խնդիր է և սակավաթիվների մենաշնորհ:

Ա. Զաքարյանի աշխատության ենթավերնագիրն արդեն՝ «Ակունքները և զարգացման ուղիները», շատ բան է ասում գրքի կառուցվածքի ու նպատակների մասին: Այնտեղ չենք գտնի ո՛չ մի ավելորդ հատված կամ մաս, զարդ կամ նշանախեց, ընդհակառակը, աշխատության էջերը նեղ են գալիս գիտնական-հետազոտողի մտածումներն ամբողջությամբ պարփակելու համար: Սկզբից մինչև վերջ գործ ունենք հայոց բանաստեղծության հետ, որի նմուշները վկայակոչվում են ու վերլուծվում են իրենց անհատական և հոգեբանական բացահայտման միջոցով, կաղապարների ու կանխավ որոշված տեսակետների գործադրության: Միշտ և ամենուր էզրակացությունները բխեցվում են նյութից և ո՛չ կամայական ենթադրությունների համար կոմպաններ որոնվում... Զաքարյանը քայլ առ քայլ բաց է անում մեր առջև հին վիպական երգերի, ողբերի, միջնադարյան հայրենիների, նարեկացու, Շնորհալու, Արուսյանի ստեղծագործական անհատականության հատկանշական կողմերն ու գաղափարական հետախնդրությունները, հայտնագործում այն ներքին թելերը, որոնք ծայր առնելով մեր հին բանաստեղծությունից և հիշածս քերթողների գրվածքներից, հասնում են մինչև Ալիշան, Պեշիկթաշլյան, Դուրյան, Հովհաննիսյան, Սիամանթո, Թումանյան, Զարենց, Պարույր Սևակ, և ճատկապես Թումանյանը, ձևափոխվում ու ձուլվում են նրանց մեծ անհատականության հետ:

Նուրբ դիտողություններն ու գեղարվեստական վերլուծման օրինակներն առատ են այս աշխատության մեջ, և եթե միայն էականների վրա ուշադրություն հրավիրեինք, ապա շատ պիտի ընդարձակվեր մեր մատենախոսությունը: Այնուհանդերձ, չենք կարող աչքաթող անել գրանցից մեկ-երկուսը, որոնք հատկապես, մեր կարծիքով, աչքի են ընկնում նրբությամբ ու թարմությամբ: Դրանցից մեկը վերաբերում է Թումանյանի ստեղծագործության մեջ առկա, այսպես կոչված, հայածվածության թեմային, որի կապակցությամբ նկատվում է, որ թեմաները չէ, որ կանխորոշել են մեծ բանաստեղծի այս կամ այն քերթվածի հղացումն ու ծնունդը, այլ նրա ապրած ու վերարտադրած կյանքն ու ժամանակը, նրա հերոսներին ծնած ու սնած իրականությունը: Հայածվածությունը հայ իրականության ու հանրային կեցության ներքին էությունն է. որտեղ մեկի ազատության ձգտումը մյուսի համար ստեղծում է ողբերգական վիճակ և երկուսն էլ, փաստորեն, դառնում են հալածական՝ հայածելով միմյանց, հալածելով մերձավորներից ու թշնա-

միներեց և ի վերո ընկնում այնպիսի վիճակի մեջ, որն իր էական կոզմերով վերհիշեցնում էր հնօրյա ողորկին ընթրող ազգային կյանքին ու հոգեբանությանը: Ջաքարյանը սքանչելի մեկնարանում է տալիս փոքր շարժառիթների և աղետարեր հետևանքների թուփանյանական դրամայի տեսությունը (էջ 165—167), հերոսների բնութագրման սկզբունքին, երբ նրանց անձն ու գործը գնահատվում են ոչ միայն իր իսկ բերանով, այլև մերձավորների ընկալմամբ, նաև շրջապատի ու օտարների ըմբռնմամբ, երևույթ, որ թուփանյանական էպիզոդի մի ինքնատիպ արտահայտությունը պիտի դիտվի:

Քննության առարկա աշխատության էական առանձնահատկություններից մեկն էլ, այսպիսով, այն է, որ այստեղ հայոց նոր բանաստեղծության ազգային ոճի ու յուրահատկությունների հայտարարմանը զուգընթաց մոռացության չեն մատնված անհատ ստեղծագործողները և ամփոփ գաղափար է տրվում ինչպես նաև նախասիրած թեմաների, ոճի, ստեղծագործական սկզբունքների ու կերպավորման եղանակների, այնպես էլ առանձին վերցրած գրվածքների ու բանաստեղծական անհատականության հայտարարն հանդիսացող ստեղծագործությունների արվեստի ու գաղափարների մասին: Հաջողված են «Վերքի», Թումանյանի «Մարո», «Լոռեցի Սաքոն», «Անուշ» պոեմների վերլուծությունները, Աբովյանի, Թումանյանի և մյուսների ստեղծագործական փորձին հաղորդակից դարձնող բաղում էջերը և այլն:

Ջաքարյանի աշխատության յուրահատկություններից մեկն էլ, վերջապես, այն է, որ գրքի շատ էջերում ներհուն գրականագետի կողքին զգացնել է տալիս նաև նրբաճաշակ գեղագետը, որին օտար չեն հնչյունների ու գույների միջոցով վեհն ու ողբերգականը վերարտադրելու գաղտնիքները:

Գրախոսվող սույն աշխատությունը պարունակում է առանձին վիճելի ձևակերպումներ ու թեմաներ բնորոշումներ ես, որոնցից մեկ-երկուսի վրա կուզենիք ուշադրություն հրավիրել: Թվում է, համոզիչ չէ Ալիշանի «Հրազդան» բանաստեղծությունը դիմառնության հնարքի արտահայտությունը հայարելը և Պատկանյանի «Արաքսի արտասունքը» բերթվածի հետ միևնույն շարքը դասելը: Անշուտ, ճիշտ է հեղինակը, երբ նկատում է, որ դրանց մեջ քնարական հերոսը իր վշտերն ու մտածումները կիսելով հայրենի բնության հետ, մի տեսակ թեթևացնում է վշտերի իր բեռը, հոգեկան խաղաղություն գտնում, բայց բնությունն իր հերթին, «Հրազդան» բանաստեղծության մեջ, մասնավորապես, չի դառնում նրան վշտակից, իր վերաբերմունքը չի արտահայտում ո՛չ անձնավորմամբ ու ժպտախառն խոսքով, ո՛չ էլ շարժուն խաղով կամ տարերրի դրսևորմամբ, հատկանիշներ, որոնք անհրաժեշտ տարր են իսկական դիմառնությունների մեջ: «Հրազդան» քնարական մենախոսություն է, ուր բնությունը ծառայում է լոկ խորթ՝ ներգործում մեծ ուժի հասնելու համար. բայց ո՛չ գործող անձ կամ անձնավորված կերպար:

Տարակարծության տեղիք են տալիս Ա. Ջաքարյանի աշխատության 112—114 էջերը, ուր ընդհանրություններ են նշմարվում Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմի գլխավոր հերոսի մթափնած ուղեղը փոթորկող ահասարսուռ տեսարանների և բանաստեղծական հնօրյա պատկերացումների միջև: Մինչդեռ մեզ թվում է, որ պիտի շեշտվեր նաև խելագարի անսանձ երեւակայությունը կյանքի կոչված պատկերների ու դիպվածների հոգեբանական ազդակների ողբասացությունից տարբեր գործողություն լինելու հանգամանքը:

Մի որոշ չափով խմբագրման կարիք ունեն հայոց նոր բանաստեղծության մեջ տեսիլի բ. տեսիլային պատկերների հայտնաբերման շուրջ հեղինակի նկատողությունները: Խոսքը աշխատության այն էջերի մասին է, որոնք նվիրված են Հ. Թումանյանի «Գեպի անհունը» պոեմի մեջ առկա երազային, երբեմն քաղցրանուշ, իսկ մեկ-մեկ էլ՝ խորհրդավոր ու չարագուշակ պատկերների մեկնաբանմանը (էջ 219 և այլն): Թվում է, տվյալ օրինակներն աչքի առաջ ունենալով՝ առավել պատշաճ կլինեք խոսել նոր բանաստեղծությանը բնորոշ՝ երազի ու երազային պատկերների մասին և ո՛չ հատկապես տեսիլքի, քանի որ տեսիլքը վարքագրական-սրբախոսական հուշարձաններին բնորոշ արտահայտչամիջոց կամ եղանակ է և միանգամայն ընտանի ու հարազատ միջնադարյան մարդու մտածողությանն ու ընկալումներին, ըստ որի տեսիլքն աներեկայելի էր առանց սուրբ հոգու միջնորդության, մինչդեռ XX դարասկզբի հայ մարդու համար դա արդեն անըմբռնելի էր: Ուստի, կրկնում ենք, հարկ էր խոսել երազի ու երազանքի մասին, որ այո՛, կարող էր չարագուշակ էլ լինել ու կատարվել, բայց տեսիլք չէր դառնա բնավ, եթե ուզում ենք ընդունել գրական այդ տեսակի ժանրային յուրահատկությունները:

Իր աշխատության մեջ Ա. Ջաքարյանը հարցադրման կարգով մի ածանցյալ խնդիր է առաջադրել՝ Գուրյանի և Պեշիկթաշլյանի պատմական ողբերգությունների և միջնադարյան

պատմա-հայրենասիրական ողորների կամ պոեմների օրգանական կապի խնդիրը՝ գրելով. «Պե-
շիկթաշլյանի և Դուրյանի պատմական ողբերգությունների նյութը, հենքը պատմական ողբեր-
ն են, այդտեղից է գալիս այդ երկերի հուզական-պաթետիկ հավելյալ բեռը» (էջ 104)։ Որքան էլ
դրամայի ծագման մեջ ծիական-արարողականը մեծ դեր ունենա, առանց տատանվելու պետք
է ասենք, որ միջնադարյան պատմական ողբերը իրենց դասական օրինակներով (Ներսես
Շնորհալի, Մինաս Թափաթեցի, Գրիգոր Մերենց Խլաթեցի, Ստեփանոս Օրբելյան, Սիմեոն
Ապարանցի և այլն) աղերսակցության որևէ եզր Դուրյանի և Պեշիկթաշլյանի գործերի հետ
չունեն ու թեմայով էլ չեն առնչվում։

Մի վերջին դիտողություն ևս. կարծում ենք, նախանձելի հարցասիրության, բայց և ան-
համոզիչ հետևության արդյունք են աշխատության այն պարբերությունները, ուր անդրադառ-
նալով Արուսյանի ճարտասանական ինքնախարաղամանը՝ «... Երանի՜ ևն սհաթին, որ մեկ
ազնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անպիտան դրությունը դեն քցի
ու ինքը նորեն էնպես դրի մեր քաշ Հայերի պատմությունը, որ լսող, կարդացող վառվի, բոր-
բոթի, զարմանա, հիանա ու էն գրողի դալամն ու գիրքն, ինչպես Պետրարքինը՝ մասունքի պես
պաշտի, ծոցումը պահի»,— վերջինիս կցում է այսպիսի խոսքեր. «Դժբախտաբար, մինչև
այժմ պարզված չէ, թե Պետրարքայի կոնկրետ ո՞ր երկը նկատի ունի Արուսյանը։ Անշուշտ,
կամ «Աֆրիկան», որի համար բանաստեղծն արժանացել է դափնեպսակի, կամ ավելի ուշ
գրած «Նշանավոր այրերի մասին» դիրքը» (էջ 82)։ Մեր համոզմամբ՝ ո՛չ մեկն է և ո՛չ էլ
մյուսը, այլ՝ «Երգերի գիրքը», որ իսկապես Պետրարքայի թողած ամենամեծ ավանդն է իտա-
լական և համաշխարհային մշակույթի մեջ, որն Արուսյանը կարդացել էր դեռ Դորպատում,
1835-ին, և որի ոճի ու ողու արձագանքն է, որ ներկա պարագայում ցանկանում չի գտնել
դալիք հայ քերթության մեջ։ Ե՛վ «Աֆրիկա» պոեման, և՛ «Նշանավոր այրերի մասին» դիրքը
դրված էին լատիներենով, թույլ, քաղվածո ու համարյա մոռացված գործեր էին, ո՞ր թե մա-
սունքի պես էլ պաշտվին։

Ներափակենք. Ա. Զաքարյանի սույն աշխատությունը, մեր անկեղծ համոզմամբ, նորու-
յուն է հայ բանասիրության մեջ իր հղացմամբ ու կատարմամբ՝ զրականագիտական
խնկալուն հետադոտություն և բանաստեղծական խոսքի վերլուծման լավագույն արտահայտու-
թյուն։ Այն ճշգրիտ գաղափար է տալիս հայ բանաստեղծության անցած ճանապարհի և ստեղ-
ծագործական ավանդների փոխանցման դարավոր ու բարդ ընթացքի, նրա ակունքների, ազ-
դալիս յուրօրինակությունների ու օտար առնչակցությունների, նորագույն շոշանի մեր մեծ
քնարերգականների ու քերթության ստեղծագործական փորձի ու ձեռքբերումների, մարդու հոգե-
բանության, հուզաշխարհի ու շրջապատի հետ ունեցած բազմազան փոխհարաբերությունների
վերարտադրելու սկզբունքների մասին։

Հայոց նոր բանաստեղծության զարգացման, հնօրյա ստեղծագործական սկզբունքների
փոխակերպման, քերթության նոր ավանդների ձևավորման ընթացքի հետադոտությունը, որ
սկսել է Ա. Զաքարյանը, սույն գրքով չի վերջանում։ Սրբյանի, Դուրյանի, Հովհաննիսյանի,
Դումանյանի, Իսահակյանի և նրանց ժամանակակից ու հաջորդ բանաստեղծների դեղարվես-
տաբան մտածողությունն ունի բազում ու բազում ուրիշ ծալքեր էլ, որոնց քննությանը պիտի
նվիրվի առաջիկայում գրվելիք ու հրատարակվելիք հատորը։

Այս առաջինի կատարումը բոլոր կողմերով այնքան ինքնատիպ ու հաջող է, որ առանց
երկբայության կարող է երաշխիք ծառայել հաջորդի ժամանակին ու կատարյալ ձևով աշխարհ
գալուն։

Պ. Հ. ՉԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր